ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
կնքված պայմանագրի մասին

Գյուղատնտեսության զարգացման հիմնադրամը ստորև ներկայացնում է իր կարիքների համար աուդիտորական ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված ԳՀՀ-ԳՀԾՁԲ-18/1 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2018 թվականի ապրիլի 16-ին կնքված N ԳՀՀ-ԳՀԾՁԲ-18/1 պայմանագրերի մասին տեղեկատվությունը՝

	Գնման առարկայի							
չափաբաժնի համարը	անվանումը	չափման միավորը	քանակը[1]		նախահաշվային գինը /ՀՀ դրամ/		համառոտ նկարագրությունը (տեխնիկական բնութագիր)	պայմանագրով նախատեսված համառոտ նկարագրությունը (տեխնիկական բնութագիր)
			առկա ֆինանսական միջոցներով[2]	ընդհանուր	առկա ֆինանսական միջոցներով[3]	ընդհանուր		
1	աուդիտորական ծառայություններ	դրամ	1	1	2500000	2500000	Համաձայն Հավելված 1-ի	Համաձայն Հավելված 1-ի

Գնման ընթացակարգի ընտրության հիմնավորումը	Գնումների մասին ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդենթակետ, ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշման 23-րդ հոդվածի 2-րդ կետ

Գնման ֆինանսավորման աղբյուրը՝ ըստ բյուջետային ծախսերի գործառական դասակարգման[4]

Բաժին	Խումբ	Դաս	Ծրագիր	Բյուջե	Արտաբյուջե	Այլ
04	02	01	06	V		

Հրավեր ուղարկելու կամ հրապարակելու ամսաթիվը		15.03.2018թ	
Հրավերում կատարված փոփոխությունների ամսաթիվը	1		
	...		
Հրավերի վերաբերյալ պարզաբանումների ամսաթիվը		Հարցարդման ստացման	Պարզաբանման
	1		
	...		

Հ/Հ	Մասնակիցների անվանումները	Յուրաքանչյուր մասնակցի հայտով ներկայացված գինը ՀՀ դրամ[5]					
		Գինն առանց ԱԱՀ		ԱԱՀ		Ընդհանուր	
		առկա ֆինանսական միջոցներով[6]	ընդհանուր	առկա ֆինանսական միջոցներով[7]	ընդհանուր	առկա ֆինանսական միջոցներով[8]	ընդհանուր
Չափաբաժին 1							
1	«Բի-Դի-Օ Արմենիա» ՓԲԸ		1900000		380000		2280000
2	«Աուդիտ Սերվիս» ՍՊԸ		2250000		450000		2700000
3	«Փըրֆեքթ Աուդիտ» ՍՊԸ		2650000		530000		3180000
4	«Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ		1625000		325000		1950000
5	«ԱՍԱՏՐՅԱՆՍ» ՍՊԸ		1380000		276000		1656000

Այլ տեղեկություններ	**Ծանոթություն՝** Եթե հրավիրվել են բանակցություններ գների նվազեցման նպատակով:

Տվյալներ մերժված հայտերի մասին

Չա	Մասնակցի անվանումը	Գնահատման արդյունքները (բավարար կամ անբավարար)

---

1 Լրացվում է կնքված պայմանագրով գնվելիք ապրանքների, ծառայությունների, աշխատանքների քանակը

2 Լրացնել փվյալ պայմանագրի շրջանակներում առկա ֆինանսական միջոցներով գնվելիք ապրանքների, ծառայությունների, աշխատանքների քանակը, իսկ պայմանագրով նախատեսված ընդհանուր ապրանքների, ծառայությունների, աշխատանքների քանակը լրացնել կողքի՝ «ընդհանուր» սյունակում:

3 Եթե փվյալ պայմանագրի շրջանակներում նախատեսված են ավելի քիչ միջոցներ, ապա լրացնել առկա ֆինանսական միջոցներով նախատեսված գումարի չափը, իսկ ընդհանուր գումարը լրացնել կողքի՝ «ընդհանուր» սյունակում:

4 Այլ աղբյուրներից ֆինանսավորվելու դեպքում նշել ֆինանսավորման աղբյուրը

5 Եթե առաջարկված գները ներկայացված են երկու կամ ավելի արժույթներով, ապա գները լրացնել փվյալ հրավերով սահմանած փոխարժեքով՝ Հայաստանի Հանրապետության դրամով:

6 Լրացնել փվյալ ընթացակարգի շրջանակներում առաջարկված գումարի չափը առանց ԱԱՀ, իսկ առաջարկված ընդհանուր գումարը առանց ԱԱՀ լրացնել կողքի՝ «ընդհանուր» սյունակում:

7 Լրացնել փվյալ ընթացակարգի շրջանակներում առաջարկված գումարից հաշվարկված ԱԱՀ-ն, իսկ առաջարկված ընդհանուր գումարից հաշվարկված ԱԱՀ-ն լրացնել կողքի՝ «ընդհանուր» սյունակում:

8 Լրացնել փվյալ ընթացակարգի շրջանակներում առաջարկված գումարի չափը՝ ներառյալ ԱԱՀ-ն, իսկ առաջարկված ընդհանուր գումարը՝ ներառյալ ԱԱՀ-ն, լրացնել կողքի՝ «ընդհանուր» սյունակում:

փա-բաժնի համարը		Ծրարը կազմելու և ներկայացնելու համապատասխանությունը	Հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայությունը	Առաջարկած գնման առարկայի տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը	Մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը	Մասնագիտական փորձառությունը	Ֆինանսական միջոցներ	Տեխնիկական միջոցներ	Աշխատանքային ռեսուրսներ	Գնային առաջարկ
Չ 1										
1	«Աուդիտ Սերվիս» ՍՊԸ	Չի համապատասխանում	Համապատասխանում է							
2	«Փըրֆեքթ Աուդիտ» ՍՊԸ									
3	«Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ									
4	«ԱՍԱՏՐՅԱՆՍ» ՍՊԸ									

Այլ տեղեկություններ	**Ծանոթություն՝** Հայտերի մերժման այլ հիմքեր:
	«Աուդիտ Սերվիս» ՍՊԸ-ի, «ԱՍԱՏՐՅԱՆՍ» ՍՊԸ-ի, «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ի և «Փըրֆեքթ Աուդիտ» ՍՊԸ-ի հայտերը չեն համապատասխանում հրավերի պահանջներին, քանի որ վերջիններս ընդգրկված չեն Համաշխարհային բանկի համար ամբողջովին ընդունելի իրավասու անկախ աուդիտորների ցանկում:

Ընտրված մասնակցի որոշման ամսաթիվը	06.04.2018թ	
Անգործության ժամկետ	Անգործության ժամկետի սկիզբ	Անգործության ժամկետի ավարտ
	09.04.2018թ	13.04.2018թ
Ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկի ծանուցման ամսաթիվը	16.04.2018թ	
Ընտրված մասնակցի կողմից ստորագրված պայմանագիրը պատվիրատուի մոտ մուտքագրվելու ամսաթիվը	17.04.2018թ	
Պատվիրատուի կողմից պայմանագրի ստորագրման ամսաթիվը	18.04.2018թ	

Չա փա-բաժնի համարը	Ընտրված մասնակիցը	Պայմանագրի					
		Պայմանագրի համարը	Կնքման ամսաթիվը	Կատարման վերջնաժամկետը	Կանխավճարի չափը	Գինը ՀՀ դրամ	
						Առկա ֆինանսական միջոցներով	Ընդհանուր[9]
1	«Բի-Դի-Օ Արմենիա» ՓԲԸ	ԳՀՀ-ԳՀԾՁԲ-18/1	16.04.2018թ.	07.05.2018	0	2280000	2280000

Ընտրված մասնակցի (մասնակիցների) անվանումը և հասցեն

Չա փա-բաժնի համարը	Ընտրված մասնակիցը	Հասցե, հեռ.	Էլ.-փոստ	Բանկային հաշիվը	ՀՎՀՀ[10] / Անձնագրի համարը և սերիան
1	«Բի-Դի-Օ Արմենիա» ՓԲԸ	ՀՀ, ք. Երևան, Վ. Սարգսյան 10-114	bdo@bdoarmenia.am	1570013745270100	01569792

Այլ տեղեկություններ	-
Մասնակիցների ներգրավման նպատակով <Գնումների մասին> ՀՀ օրենքի համաձայն իրականացված հրապարակումների մասին տեղեկությունները	<Գնումների մասին> ՀՀ օրենքի համաձայն իրականացվել են բոլոր անհրաժեշտ տեղեկատվությունների հրապարակումները
Գնման գործընթացի շրջանակներում հակաօրինական գործողություններ հայտնաբերվելու դեպքում դրանց և այդ կապակցությամբ ձեռնարկված գործողությունների համառոտ նկարագիրը	Գնման գործընթացի շրջանակներում հակաօրինական գործողություններ չեն հայտնաբերվել
Գնման գործընթացի վերաբերյալ ներկայացված բողոքները և դրանց	Գնման գործընթացի վերաբերյալ ներկայացված բողոքներ առկա չեն

[9] *Եթե պայմանագիրը կնքվելու է ընդհանուր արժեքով, սակայն նախատեսված են ավելի քիչ միջոցներ, ապա ընդհանուր գինը լրացնել «Ընդհանուր» սյունակում, իսկ առկա ֆինանսական միջոցների մասով՝ «Առկա ֆինանսական միջոցներով» սյունակում:*

[10] *Չի լրացվում, եթե պայմանագրի կողմ է հանդիսանում Հայաստանի Հանրապետությունում հարկ վճարողի հաշվարկային հաշիվ չունեցող անձը:*

վերաբերյալ կայացված որոշումները	
Այլ անհրաժեշտ տեղեկություններ	-

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող		
Անուն, Ազգանուն	Հեռախոս	Էլ. փոստի հասցեն
Դավիթ Գրիգորյան	012 55 15 15	dgrigoryan@agridf.am

Պատվիրատու՝ Գյուղատնտեսության զարգացման հիմնադրամ

Հավելված N 1
«16» ապրիլի 2018 թ. կնքված
ԳՀՀ-ԳՀԾՁԲ-18/1 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Գյուղատնտեսության զարգացման հիմնադրամի աուդիտորական ծառայության գնման

Նպատակը

Գյուղատնտեսության զարգացման հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունների աուդիտի նպատակն է աուդիտորին հնարավորություն տալ կարծիք հայտնելու Հիմնադրամի՝ Ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտների (ՖՀՄՍ) հիման վրա կազմված 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ:
Ֆինանսական հաշվետվությունների ամբողջական փաթեթը ներառում է հետևյալ բաղադրիչները.
(ա) Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն՝ տարվա վերջի դրությամբ,
(բ) Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մաին համախմբված հաշվետվություն՝ տվյալ տարվա համար,
(գ) Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն՝ տվյալ տարվա համար,
(դ) Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն՝ տվյալ տարվա համար,
(ե) ծանոթագրություններ, որոնք բաղկացած են հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի վերաբերյալ համառոտագրից և այլ բացատրական տեղեկատվությունից,
Գյուղատնտեսության զարգացման հիմնադրամի հաշվապահական գրանցումները, որոնք կատարվում են ֆինանսական գործարքների արտացոլման նպատակով, հիմք են հանդիսանում ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար:

Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման պատասխանատվությունը

Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար՝ ներառյալ տեղեկատվության բավարար բացահայտումը, պատասխանատու է հիմնադրամի ղեկավարությունը: Սա ներառում է համարժեք հաշվապահական գրառումների պահպանումը և ներքին հսկողության իրականացումը, հաշվապահական քաղաքականության ընտրությունն ու կիրառությունը և հիմնադրամի ակտիվների պահպանումը: Որպես աուդիտի գործընթացի մաս՝ աուդիտորները պետք է ղեկավարությունից պահանջեն գրավոր հաստատում տրամադրված տեղեկատվության վերաբերյալ:

Ծառայությունների ծավալը

Աուդիտը պետք է իրականացվի Հաշվապահների միջազգային ֆեդերացիայի (ՀՄՖ) Աուդիտի և հավաստիացման ստանդարտների միջազգային խորհրդի հրապարակած Աուդիտի միջազգային ստանդարտների (ԱՄՍ) համաձայն: Այդ ստանդարտները պահանջում են, որպեսզի աուդիտորն աուդիտը պլանավորի և իրականացնի այնպես, որպեսզի ստացվի բավարար հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները զուրկ են նշանակալի անճշտություններից: Աուդիտի ընթացքում ընտրանքային եղանակով ուսումնասիրվում են ֆինանսական հաշվետվություններում ներկայացված գումարներն ու բացահայտումները հիմնավորող փաստերը: Աուդիտը ներառում է նաև օգտագործված հաշվապահական սկզբունքների և ղեկավարության կողմից կատարված հիմնական գնահատականների գնահատումը, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացման գնահատումը:
Աուդիտորը հատկապես պետք է ուշադրություն դարձնի հետևյալ խնդիրներին, ներառյալ պետական ոլորտի մարմիններին վերաբերող հատուկ նկատառումները.
ա) Ըստ Աուդիտի միջազգային ստանդարտ 240-ի (ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ժամանակ խարդախության դեպքերի հետ կապված աուդիտորի պարտականությունները)՝ աուդիտի պլանավորման և իրականացման ընթացքում աուդիտի ռիսկը մինչև ընդունելի մակարդակը նվազեցնելու նպատակով աուդիտորը պետք է հաշվի առնի խարդախության պատճառով ֆինանսական հաշվետվություններում տեղ գտած նշանակալից անճշտությունների ռիսկերը:
բ) Ըստ Աուդիտի միջազգային ստանդարտ 250-ի (Ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ժամանակ օրենքների և օրենսդրական դաշտի պահանջների կատարումը)՝ աուդիտի գործընթացի պլանավորման և իրականացման, ինչպես նաև արդյունքների գնահատման և ներկայացման ժամանակ աուդիտորը պետք է հաշվի առնի, որը կառույցի կողմից օրենքների և կարգավորման դաշտի պահանջների չկատարումը կարող է էապես ազդել ֆինանսական հաշվետվությունների վրա:

գ) Ըստ Աուդիտի միջազգային ստանդարտ 260-ի (Ընկերության կառավարման համար պատասխանատուներին աուդիտի հետ կապված խնդիրների մասին հաղորդում)՝ աուդիտորը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ժամանակ հիմնադրամի կառավարման մարմնին պետք է տեղեկացնի կառավարչական հետաքրքրություն ներկայացնող խնդիրների մասին:
դ) Ըստ Աուդիտի միջազգային ստանդարտ 265-ի (Կառավարման և ղեկավարման համար պատասխանատուներին ներքին հսկողության բացթողումների մասին տեղեկացում)՝ աուդիտորը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ժամանակ ներքին հսկողության հայտնաբերված թերությունների մասին պետք է պատշաճ կերպով տեղեկացնի կառավարման և ղեկավարման համապատասխանատուներին:
ե) Ըստ Աուդիտի միջազգային ստանդարտ 330-ի (Աուդիտորի ընթացակարգերը գնահատված ռիսկերին արձագանքելիս)՝ Աուդիտի ռիսկն ընդունելի մակարդակի նվազեցնելու նպատակով աուդիտորը պետք է որոշի իր արձագանքը ֆինանսական հաշվետվությունների մակարդակով գնահատված ռիսկերի նկատմամբ և պնդումների մակարդակով գնահատված ռիսկերին արձագանքելու նպատակով մշակի և իրականացնի աուդիտի լրացուցիչ ընթացակարգեր:
զ) Ըստ Աուդիտի միջազգային ստանդարտ 402-ի (Աուդիտի նկատառումները ծառայություններ մատուցող ընկերություն ներգրաված կառույցի վերաբերյալ)՝ այն դեպքերում, երբ տվյալ կառույցի գործառնությունների մի մասն իրականացնում է ծառայություններ մատուցող երրորդ կողմը, ապա աուդիտորը աուդիտի գործընթացի ժամանակ պետք է ներառի ծառայություններ մատուցող ընկերության ներքին հսկողության միջավայրին վերաբերող նկատառումներ և գնահատականներ:
է) Ըստ Աուդիտի միջազգային ստանդարտ 580-ի (գրավոր ներկայացում)՝ որպես աուդիտի գործընթացի բաղկացուցիչ՝ աուդիտորը ընկերության ղեկավարությունից կամ, համապատասխան դեպքերում, կառավարող մարմնից պետք է ստանա աուդիտի փաստն արձանագրող նամակ:

Աուդիտորական հաշվետվություններ

Աուդիտորը պետք է ներկայացնի անկախ աուդիտորական կարծիք 2017թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ Գյուղատնտեսության զարգացման հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ ՝ նշելով, թե արդյո՞ք այդ ֆինանսական հաշվետվություններն արտացոլում են ընկերության ֆինանսական վիճակի և գործունեության ֆինանսական արդյունքների վերաբերյալ ճշմարիտ պատկերը՝ համաձայն Ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտների:

Ի հավելումն Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտորական կարծիքի, աուդիտորը պետք է պատրաստի նաև ղեկավարությանն ուղղված նամակ, որում աուդիտորը անհրաժեշտության դեպքում պետք է.
ա) ներկայացնի աուդիտի ընթացքում ուսումնասիրված հաշվապահական գրանցումների, համակարգերի և ներքին հսկողության մեխանիզմների վերաբերյալ իր մեկնաբանություններն ու դիտարկումները,
բ) նույնականացնի համակարգերի և հսկողության մեխանիզմների թերություններն ու թույլ օղակները և կատարի դրանց բարելավմանն ուղղված առաջարկներ,
գ) ներկայացնի այն խնդիրները, որոնք ի հայտ են եկել աուդիտի ընթացքում, աուդիտորի տեսանկյունից կարևոր են և կարող են էական ազդեցություն ունենալ հիմնադրամի գործունեության վրա,
դ) ղեկավարությանն ուղղված նամակում ներառի ղեկավարության արձագանքները,

Եթե վերը նշվածին համապատասխան առաջարկներ չկան և ղեկավարությանն ուղղված նամակ չի պատրաստվել, ապա աուդիտորը պետք է գրությամբ հավաստի, որ աուդիտորի կողմից աուդիտի ընթացքում ուշադրության արժանի ոչինչ չի բացահայտվել:
Աուդիտորի կարծիքը ներառող Ֆինանսական հաշվետվությունները և ղեկավարությանն ուղված նամակը Գյուղատնտեսության զարգացման հիմնադրամին պետք է տրամադրվեն ոչ ուշ, քան **2018թ. ապրիլի 26-ը**՝ երեք օրինակից՝ հայերեն և անգլերեն լեզուներով:

Ընդհանուր

Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և պատշաճ հրապարակման համար պատասխանատու է Գյուղատնտեսության զարգացման հիմնադրամի ղեկավարությունը: Որպես աուդիտի գործընթացի մաս, աուդիտորը ղեկավարությունից կպահանջի գրավոր հաստատում աուդիտի հետ կապված ներկայացումների համար:

Աուդիտորի համար առանց սահմանափակումների հասանելի կլինի ամբողջ տեղեկատվությունը և աուդիտորին կտրամադրվեն աուդիտի իրականացմանը նպաստող բոլոր պարզաբանումները, ներառյալ իրավական փաստաթղթերը, իրականացված ծրագրերի նախապատրաստման և վերահսկողության հաշվետվությունները: Աուդիտորը կարող է նաև պահանջել Բանկային գրանցումներում արտացոլված գումարների հատկացման և մնացորդների վերաբերյալ գրավոր հաստատում: